

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Թ Ի Վ Յ

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒՆՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ»
ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՌԵԿՏՈՐԱՏԻ ՆԻՍՏԻ**

2019 թվականի նոյեմբերի 20-ին ժամը 11:00-ին, ք. Երևան, Ալ. Մանուկյան 11 հասցեում, տեղի ունեցավ «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի Ռեկտորատի նիստը:

Նիստը նախագահում էր՝

Ռեկտորի ժ/պ

Դավիթ Խիթարյանը

Նիստին մասնակցում էին՝

Ռեկտորատի անդամներ՝

- | | |
|--------------------------|------------------------|
| 1. Գագիկ Սարգսյանը | 9. Արտակ Ստեփանյանը |
| 2. Վահան Գևորգյանը | 10. Անժելա Նուշիկյանը |
| 3. Մարինա Ասատրյանը | 11. Անդրանիկ Անդիկյանը |
| 4. Գոհար Հայրապետյանը | 12. Մեսրոպ Բարբարյանը |
| 5. Անահիտ Հարությունյանը | 13. Ռազմիկ Գրիգորյանը |
| 6. Եղիշ Դավթյանը | 14. Անի Մազմանյանը |
| 7. Օֆելյա Պետրոսյանը | 15. Հակոբ Հակոբյանը |
| 8. Կոլյա Բաբայանը | |

Նիստին հրավիրված էին Որակի ապահովման բաժնի պետ Գոհար Մուրադյանը, Ուսումնական բաժնի վիճակագիր Ռ. Մարտյանը, Ամբուլատորիայի աշխատանքների ավագ կազմակերպիչ Նունե Ասատրյանը, Գրադարանի վարիչ Կարինե Հովհաննիսյանը և Արխիվի վարիչ Վերա Ազարյանը:

Նիստին ներկա չէր Ռեկտորատի անդամ Անահիտ Գրիգորյանը:

Նիստն արձանագրեց՝

ՄՌԿ բաժնի պետ Ա. Մազմանյանը

Օրակարգ

1. Առաջին միջանկյալ քննությունների արդյունքների վերաբերյալ հաշվետվության ներկայացում:
2. Մագիստրատուրայի հեռակա ուսուցման համակարգի մագիստրոսական թեզերի պաշտպանության հանձնաժողովների կազմը և ժամանակացույցը հաստատելու հարցի քննարկում:
3. Գրադարանի 2018-2019թթ. գործունեության վերաբերյալ ամփոփ հաշվետվության ներկայացում:
4. Ամբուլատորիայի 2018-2019թթ. գործունեության վերաբերյալ ամփոփ հաշվետվության ներկայացում:
5. Արխիվի 2018-2019թթ. գործունեության վերաբերյալ ամփոփ հաշվետվության ներկայացում:
6. ՖԴՏ և մեթոդիկա ամբիոնի ասիստենտ Սաթենիկ Խաչատրյանի՝ հայցորդության ուսման վարձը զեղչելու վերաբերյալ դիմումի քննարկում:
7. Սահմանված ժամկետի բացթողմամբ վճարովի համակարգում սովորող ուսանողների ուսման վարձի զեղչի վերաբերյալ դիմումների քննարկում:
8. Ուսանողական և դասախոսական համակազմի շրջանում հարցումների անցկացման ժամանակացույց սահմանելու հարցի քննարկում:
9. Այլ հարցեր:

1. Օրակարգի առաջին հարցով (զեկուցողներ՝ Ա. Հարությունյան, Ե. Ղալթյան)

Ելույթ ունեցան Ֆակուլտետների դեկանները, ներկայացրին առաջին միջանկյալ քննությունների արդյունքների վերաբերյալ հաշվետվությունը:

Առաջարկվեց՝

Ներկայացված հաշվետվություններն ընդունել ի գիտություն:

Առաջարկությունն ընդունվեց միաձայն:

Այլ առաջարկություններ և հատուկ կարծիք չկա:

2. Օրակարգի երկրորդ հարցով (գեկուցող՝ Ա. Ստեփանյան)

Ելույթ ունեցավ Մազիստրատուրայի բաժնի պետը, ներկայացրեց Մազիստրատուրայի հեռակա ուսուցման համակարգի մագիստրոսական թեզերի պաշտպանության հանձնաժողովների կազմը և ժամանակացույցը և առաջարկեց հաստատել դրանք:

Առաջարկվեց՝

1. Հավանություն տալ Մազիստրատուրայի հեռակա ուսուցման համակարգի մագիստրոսական թեզերի պաշտպանության հանձնաժողովների կազմերին և ժամանակացույցերին:
2. Հանձնարարել Մազիստրատուրայի բաժնի պետին մագիստրոսական թեզերի պաշտպանության ժամանակացույցը համաձայնեցնել յուրաքանչյուր հանձնաժողովի նախագահի հետ, որից հետո ժամանակացույցը հրապարակել շրջանավարտներին տեսանելի վայրում:
3. Հանձնարարել ՄՌԿ բաժնի պետին՝ մեկ շաբաթվա ժամկետում նախապատրաստել Մազիստրատուրայի հեռակա ուսուցման համակարգի մագիստրոսական թեզերի պաշտպանության հանձնաժողովների կազմում ընդգրկված հրավիրված մասնագետների հետ կնքվելիք Վաճրովի ծառայությունների մատուցման պայմանագրերի նախագծերը:

*Առաջարկությունն ընդունվեց միաձայն:
Այլ առաջարկություններ և հատուկ կարծիք չկա:*

3. Օրակարգի երրորդ հարցով (գեկուցող՝ Կ. Հովհաննիսյան)

Ելույթ ունեցավ Գրադարանի վարիչը, ներկայացրեց Գրադարանի 2018-2019թթ. գործունեության վերաբերյալ ամփոփ հաշվետվությունը:

Առաջարկվեց՝

Ներկայացված հաշվետվությունն ընդունելի գիտություն:

*Առաջարկությունն ընդունվեց միաձայն:
Այլ առաջարկություններ և հատուկ կարծիք չկա:*

4. Օրակարգի չորրորդ հարցով (գեկուցող՝ Ն. Ասատրյան)

Ելույթ ունեցավ Ամբուլատորիայի աշխատանքների ավագ կազմակերպիչը, ներկայացրեց Ամբուլատորիայի 2018-2019թթ. գործունեության վերաբերյալ ամփոփ հաշվետվությունը:

Առաջարկվեց՝

Ներկայացված հաշվետվությունն ընդունելի գիտություն:

*Առաջարկությունն ընդունվեց միաձայն:
Այլ առաջարկություններ և հատուկ կարծիք չկա:*

5. Օրակարգի հինգերորդ հարցով (գեկուցողներ՝ Վ. Ազարյան)

Ելույթ ունեցավ Արխիվի վարիչը, ներկայացրեց Արխիվի 2018-2019թթ. գործունեության վերաբերյալ ամփոփ հաշվետվությունը:

Առաջարկվեց՝

Ներկայացված հաշվետվությունն ընդունելի գիտություն:

*Առաջարկությունն ընդունվեց միաձայն:
Այլ առաջարկություններ և հատուկ կարծիք չկա:*

6. Օրակարգի վեցերորդ հարցով (գեկուցող՝ Ա. Հարությունյան)

Ելույթ ունեցավ ՖԴԱՏ դեկանը և ներկայացրեց ՖԴՏ և մեթոդիկա ամբիոնի ասիստենտ Սաթենիկ Խաչատրյանի դիմումը հայցորդության ուսման վարձը զեղչելու վերաբերյալ:

Առաջարկվեց՝

1. Հանձնարարել Իրավախորհրդատուին վերանայել «Ինստիտուտում աշխատող հայցորդների ուսման վարձավճարի մասնակի փոխհատուցման տարակարգերը հաստատելու մասին» գործող կանոնակարգը (այսուհետ՝ Կանոնակարգ) և վերջինում փոփոխություններ կատարելու վերաբերյալ առաջարկներ ներկայացնել առաջիկա Գիտական խորհրդի հաստատմանը:
2. Կանոնակարգում համապատասխան փոփոխություն կատարելուց հետո հայցորդ Սաթենիկ Խաչատրյանի ուսման վարձը զեղչել 70%-ով:

*Առաջարկությունն ընդունվեց միաձայն:
Այլ առաջարկություններ և հատուկ կարծիք չկա:*

7. Օրակարգի յոթերորդ հարցով (գեկուցողներ՝ Ե. Դավթյան, Կ. Բարսյան)

Ելույթ ունեցան ՍՄԿ դեկանը և Հեռակա բաժնի պետը, ներկայացրին վճարովի համակարգում սովորող ուսանողների՝ ուսման վարձի զեղչի վերաբերյալ սահմանված ժամկետի բացթողմամբ ներկայացված դիմումները:

Առաջարկվեց՝

Հիմք ընդունելով «Ուսանողներին ուսանողական նպաստների և պետական կրթաթոշակների հատկացման» կարգի 16-րդ կետը՝ բավարարել ուսանողների՝ սահմանված ժամկետի բացթողմամբ ներկայացված ուսման վարձի գեղչի վերաբերյալ դիմումները:

Առաջարկությունն ընդունվեց միաձայն:

Այլ առաջարկություններ և հատուկ կարծիք չկա:

8. Օրակարգի ութերորդ հարցով (գեկուցող՝ Գ. Մուրադյան)

Ելույթ ունեցավ Որակի ապահովման բաժնի պետը և ներկայացրեց ուսանողական և դասախոսական համակազմի շրջանում հարցումների անցկացման ժամանակացույց սահմանելու հարցը:

Առաջարկվեց՝

1. Ուսանողական և դասախոսական համակազմի շրջանում հարցումների անցկացման ժամանակացույցը հաստատելու վերաբերյալ հարցի քննարկումը հետաձգել մինչև համապատասխան կանոնակարգերի հաստատումը:
2. Հանձնարարել շահագրգիռ ստորաբաժանումներին ուսումնասիրել հարցումները և մինչև 25.11.2019թ. Որակի բաժին ներկայացնել համապատասխան առաջարկություններ հարցաթերթիկների բովանդակության և կառուցվածքի վերաբերյալ:

Առաջարկությունն ընդունվեց միաձայն:

Այլ առաջարկություններ և հատուկ կարծիք չկա:

9. Օրակարգի իններորդ հարցով (գեկուցող՝ Մ. Բարբառյան)

Ելույթ ունեցավ Պրակտիկայի և կարիերայի բաժնի պետը, ներկայացրեց պրակտիկայից չգնահատված ուսանողների ցանկը և բարձրացրեց վերջիններիս նկատմամբ պատասխանատվության միջոց կիրառելու հարցը:

Առաջարկվեց՝

Հանձնարարել Իրավախորհրդատուին ուսումնասիրել պրակտիկայի կազմակերպման, ացկացման, ամփոփման և պրակտիկան չգնահատված լինելու դեպքում պատասխանատվության միջոցներ կիրառելու վերաբերյալ ՀՖԿՍՊ հիմնադրամում և այլ ԲՈՒՀ-երում գործող կարգերը և գործող կարգում փոփոխություններ կատարելու վերաբերյալ առաջարկներ ներկայացնել առաջիկա Գիտական խորհրդի հաստատմանը:

Ռեկտորի ժ/պ _____ Դ. Խիթարյան

Ռեկտորատի անդամներ՝

Գ. Սարգսյան

Վ. Գևորգյան

Մ. Ասատրյան

Գ. Հայրապետյան

Ա. Հարությունյան

Ե. Դավթյան

Օ. Պետրոսյան

Կ. Բաբայան

Հ. Հակոբյան

Ա. Մազմանյան

Ա. Ստեփանյան

Ա. Նուշիկյան

Ա. Գրիգորյան

Ա. Անդիկյան

Մ. Բարբարյան

Ռ. Գրիգորյան

Քարտուղար՝ _____ Ա. Մազմանյան